# ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

## ԴԱՍ 2.14. Հարավային Ասիա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ

. . .

*Բարձրացող ճանապարհները մաքուր պահելու համար ձևավորվել է զբաղվածության մի տեսակ, որը ստացել է «սանիտարական» անունը: Այն Նեպալի բնակիչների համար է: Վերջին տասնամյակներում Էվերեստ բարձրացող լեռնագնացների խմբերի գիշերակացի և սննդի խնդիրների լուծման համար ծովի մակարդակից 3440մ բարձրության վրա կառուցվել է լեռնային, գեղեցիկ, գունագեղ շենք-շինություններով Նամչե Բազար քաղաքը (զբոսաշրջային ավանը), որի հարևանությամբ Կոնգդե-Ռի լեռնագագաթն է՝ 6187մ բարձրությամբ:*